



ԲԱՆԱՍՏԵՂԵՐ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Սայեաթ-Նովայի 250ամեակին նուիրումը պետական մեծ հանդէսին, Երեւանի մէջ, 23 Հոկտ. 1963, խօսք կը տրուի բանաստեղծ Արամայիս Սրապեանի, որ արտասահմանէն այդ առիթով հրաւիրւում միակ հիւրն էր, իբրեւ ներկայացուցիչ Սփիւռքի հայ գրողներուն:

Կրնանք ըսել՝ իբրեւ արժանաւոր ներկայացուցիչ Սփիւռքի հայ գրողներուն, որ կը խոնարհի յաւերժական Արարատին՝ որպէս մշակ վաստակաւոր, «հունձքով բեռնարար», հայ մեծ աշուղի բազմին վրայ թափելու ո՛չ միայն արտասահմանեան գրագէտին տուրքը, այլ նաեւ Մուրատ-Ռափայէլեանի հին ու նոր գրական սերունդին խունկը սիրազեղ:

Ինչպէս ծանօթ է, Արամայիս Սրապեան մեր գրական անդամստանին վրայ հասունցուցած է ատօք և արեւահամ չորս հունձքեր, 1949էն ստղին. 1) Հանդիպումներ Մուսայիին հետ. 2) Ագոյոյէն վեցետիկ. 3) Զէնքի տակ. 4) Ալպեան ռազմիկներուն հետ: Առաջին երկուքը միասին՝ 564 էջ, 331 քերթուած: Վերջին երկուքը յուշագրական փունջեր են, խորագիրներէն իսկ բացատրուած, միասնաբար 410 էջ, բոլորն ալ տպուած Վենետիկ, Ս. Ղազար:

Սակայն Ա. Սրապեան շատ աւելի կանոնաւոր սկսած է գրել: Մուրատ-Ռափայէլեանի գրասեղաններուն վրայէն լսած է հեւքը Պէշիկիթաշեանի, Արփիարեանի և մանաւանդ անմահ Վարուժանի ու ջերմացած է մեծ Ալիշանի ոգիով խանդավառ: 1927ին արդէն քերթուած մը կը դնէ «Բագմավէպ»ի մէջ: Երկու տարի վերջ, հազիւ 19 տարեկան, կ'աւարտէ Մուրատ-Ռափայէլեանը: 1930էն ի վեր կ'աշխատակցի «Բագմավէպ»ի գրական բաժնին. նմանապէս արտասահմանեան բազմաթիւ թերթերու. վերջերս՝ կանոնաւորաբար «Նախիր» գրական շաբաթաթերթին, ուր ընդարձակօրէն կը հաղորդէ Հայաստանեան իր յուշերն ու տպաւորութիւնները:

Տպագրութեան պատրաստ ունի. 1) Օրերու լուսանցքին վրայ (բանաստեղծութիւններ). 2) Ուղեւորութեան մը արդիւնք (արձակ). 3) Զուիցերիոյ հողին վրայ (արձակ). 4) Հայրենի հողին վրայ (Ուղեւորութիւն դէպի Հայրենիք - Երեւանէն Միլանոյ, արձակ). 5) Ահա՛ մեր Հայրենիքը (ընդարձակածաւալ ազատ չափով բանաստեղծութիւն):

Ուրախակից սրտով կը մտադրենք նորա-նոր յաջողութիւններ:

ՍԱՅԵԱՅ-ՆՈՎԱ

Ի՞նչպէս երգեմ քու սէր երգող սէ՛ր քամանչան, Սայեաթ-Նովա,
Ո՞ր խնջոյքի հոխ սեղանին քեզ գովերգեմ, Սայեաթ-Նովա,
Ո՞րտեղ գտնեմ քու գոգալին նման գոգալ, Սայեաթ-Նովա,
Սէրերու սէր, սրտերու տէր, տաղերու լե՛ն, Սայեաթ-Նովա:

Լուռ է հիմա վարդի քուփին աստղ երագող պլպուլը քու,
Զի՛ փալիւլիւր մեր երգին մէջ սիրակարօտ լուսնակը քու,
Այս ի՛նչ շուտով գիշեր եղաւ մեր սրտին մէջ, Խալիսի Նոֆար,
Այս ի՛նչ անբախտ նամբորդներ ենք սիրոյ նամբուն, մեծ սագանդար:

Դարձի՛ր անձիր հեռուներէն, կարօտը մեր կը կանչէ քեզ,
Սրտիդ խորքին քու գոգալին աչքերը խոր ծովերու պէս,
Հերակլը քող կըրակ կտրած, պոռա՛յ - գոռա՛յ քրոջ վրայ,
Դուն՝ Աննայով, ես ալ քեզմով, խնջոյք սարքենք, Սայեաթ-Նովա:

Արքան նստի ի՛ր տեղը քող, դուն ալ երգիդ լերան վրայ,
Երգիդ ուժով է՛ն զօրաւոր զօրավարն ես, Սայեաթ-Նովա,
Քամանչայիդ լարը անվերջ քող գերյուզէ եւ քրքրոյ,
Երգէ՛ ազատ մէջլիսներում, իմ աննման Սայեաթ-Նովա:

Քրտան օր է կը քափառիմ, լինը նանչցայ մեր Սեւանայ,
Ճանչցայ Գառնի, նանչցայ Գեղարդ, խաչը նանչցայ էջմիածնայ,
Քու շրնորիւ ոտք եմ դըրեր մեր Պապերուն հողին վրայ,
Հազար փառով, հազար ապրիս, իմ սիրելի Սայեաթ-Նովա:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ